ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ պետական գործուղումների 2018-2019թթ. մոնիտորինգի արդյունքները (նախահեղափոխական և հետհեղափոխական շրջան)

ԵՐԵՎԱՆ 2019

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի ղեկավար՝
Արմենուհի Բուռնազյան

Ուսումնասիրության իրականացնող՝ Աստղիկ Ավչյան

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

www.policyobserver.am

www.facebook.com/PolicyObserver/

Նախաբան

Սույն մոնիտորինգի նպատակն է վերլուծել ՀՀ պետական գործուղումների կառուցվածքային առանձնահատկությունները, ընդհանուր միտումները, նաև համադրել նախկին և գործող իշխանությունների վարքագիծը գործուղումների նկատմամբ: Հրապարակման մեջ ամփոփված են 2018 թվականի մայիսից մինչև սույն թվականի մայիս ամսվա ընթացքում պետական մարմինների կողմից ավիատոմսերի ձեռքբերման հետ կապված քանակային և արժեքային մոնիտորինգի արդյունքները:

Համաձայն օրենսդրական կարգավորման, գործուղված աշխատողին հատուցվում է օրապահիկը, գիշերավարձը, ճանապարհածախսը, հյուրանոցային ամրագրման վճարը և այլ ծախսեր[1], հետևաբար գործուղվող անձանց կողմից հնարավոր են գայթակղություններ ավելի երկար գործուղումներ ունենալ հարկատուների հաշվին, ինչը բավականին դժվար բացահայտելի ռիսկ է:

Կառավարության աշխատակիցների գործուղումների քանակային մոնիտորինգ

Ստորև բերված դիագրամ 1-ում արտացոլված են հետհեղափոխական շրջանում հաճախակի գործուղված պաշտոնյաները: Թվարկված պաշտոնյաների գործուղումների հանրագումարը (184 օր) կազմում է ողջ գործուղումների (1379 օր) 13 %ը: Հաճախակի գործուղման մեկնած պաշտոնյաներն են՝

- ✓ Տաթևիկ Ռևազյան (**ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ**) - գործուղման օրերի թիվը կազմում է 50 օր, կամ ողջ գործուղումների 4 %ը,
- ✓ Հակոբ Վարդանյան (**ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ**) – 38 օր կամ 3 %,
- ✓ Արևիկ Անափիոսյան (**ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ**) – 33 օր կամ 2 %,
- ✓ Սուրեն Քրմոյան (**ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալ**) – 33 օր կամ 2 %,
- ✓ Արսեն Թորոսյան (**ՀՀ Առողջապահության նախարար**) – 33 օր կամ 2 %:

[1] ՀՀ պետական գործուղումների օրենսդրական դաշտը կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով:

Գծապատկեր 1[2]. 2018թ մայիսից մինչև 2019թ մայիս ընկած ժամանակահատվածում Կառավարության աշխատակիցների գործուղման օրերի թիվը, օր



Նույն ժամանակահատվածի կտրվածքով հաշվարկել ենք մեկ գործուղման միջին տևողությունը հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{ընդամենը գործուղումների տևողությունը,օրերով}}{\text{ընդամենը գործուղումների թիվ}} = \frac{1443}{368} \approx 4\text{օր},$$

այսինքն՝ միջինում անձի 1 գործուղման տևողությունը կազմել է 4 օր:

Կառավարության մարմինների գործուղումների քանակային մոնիտորինգ

Այնուհետև առանձնացրել ենք առավել հաճախակի պետական գործուղումներ իրականացրած 5 կառավարության մարմիններին, որոնց գործուղումների միասնական կշիռը կազմում է 40 %: Այդ մարմիններն են՝

1. ***Արտակարգ իրավիճակների նախարարություն*** – 160 օր կամ 11 %,

2. ***Արդարադատության նախարարություն*** – 153 օր կամ 11 %,

3. ***Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն*** – 102 օր կամ 7 %,

4. ***Կրթության և գիտության նախարարություն*** – 85 օր կամ 6 %,

5. ***Առողջապահության նախարարություն*** – 76 օր կամ 5 %:

[2] https://www.e-gov.am/trips/page=1/

Գծապատկեր 2[3]. 2018թ մայիսից մինչև 2019թ մայիս ընկած ժամանակահատվածում Կառավարության մարմինների գործուղումների կառուցվածքը, %



Համաձայն գծապատկեր 2-ի, առաջին տեղում ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունն է, որի գործուղումների քանակն է 160 օր կամ ընդհանուր գործուղումների 11,1 %ը, մասնավորապես գործուղված աշխատակիցների կազմում են ներառվում՝ Արսեն Սարոյանը (15 օր), Աղվան Սարգսյանը (11 օր) և Հրաչյա Ռոստոմյանը (10 օր) (Ավելի մանրամասն տես Գծապատկեր 3):

Գծապատկեր 3[4]. ՀՀ Արտակարգ Իրավիճակների Նախարարության գործուղումների կառուցվածքը, օրեր



[3] https://www.e-gov.am/trips/page=1/
[4] https://www.e-gov.am/trips/page=1/

Համաձայն ՀՀ էլեկտրոնային Կառավարման պաշտոնական կայքի, Արդարադատության նախարարության անձնակազմը իրականացրել է գործուղումներ հանրագումարային 153 օր տևողությամբ, որը կազմում է ընդամենը գործուղումնների 10,6 %ը: Առավել հաճախ գործուղել են՝ Սուրեն Քրմոյանը (33օր), Արտակ Զեյնալյանը (32 օր), Վիգեն Քոչարյանը (17 օր) և Մարիամ Գալստյան (13 օր):

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը իրականացրել է գործուղումներ 102 օր հանրագումարային տևողությամբ, որը կազմել է ընդհանուր գործուղումների 7,1 %ը: Առավել հաճախ գործուղել են Հակոբ Վարդանյանը՝ 38 օր, Գարեգին Բաղրամյանը՝ 19 օր և Արթուր Գրիգորյանը՝ 11 օր:

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցները իրականացրել են գործուղումներ 85 օր հանրագումարային տևողությամբ, որը կազմել է ընդհանուր գործուղումների 5,9 %ը: Առավել շատ գործուղել են Արևիկ Անափիոսյանը՝ 33 օր, Արայիկ Հարությունյանը՝ 20 օր և Սամվել Հարությունյանը՝ ևս 20 օր:

Հաջորդ նախարարությունը, Առողջապահության նախարարությունն է, 79 օր գործուղումների տևողությամբ կամ 5,4 %: Առավել հաճախ գործուղել են Արսեն Թորոսյանը՝ 33 օր, Լենա Նանուշյանը՝ 20 օր և Անահիտ Ավանեսյանը՝ 12 օր:

Այս ժամանակաշրջանում առավել հաճախ գործուղվել են հետևյալ ուղղություններով՝ Ռուսաստանի Դաշնություն (67 օր), ԱՄՆ (64 օր), Ղազախստանի Հանրապետություն (54 օր), Բելգիայի Թագավորություն (26 օր), Թաիլանդի Թագավորություն (24 օր) և այլն[5]:

Գնված ավիատոմսերի վերաբերյալ քանակային և արժեքային մոնիտորինգ

Ընդհանուր առմամբ, նախահեղափոխական և հետհեղափոխական ժամանակաշրջանների (2017թ. մայիսից 2018թ. ապրիլ և 2018թ. մայիսից 2019թ. ապրիլ) ավիատոմսերի ձեռքբերման հետ կապված քանակային մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ հետհեղափոխական շրջանում ավելի քիչ ավիատոմսեր են ձեռք բերվել (Գծապատկեր 4):

[5] Բելառուսի Հանրապետություն (23 օր), Իտալիայի Հանրապետություն (20 օր), Իրանի Իսլամական Հանրապետություն (20 օր), Կիպրոսի Հանրապետություն (19 օր), Ավստրիայի Հանրապետություն (14 օր), Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (13 օր), Մեծ Բրիտանիա (12 օր) և Լեհաստան (7 օր)

Գծապատկեր 4. Գնված ավիատոմսերի քանակը (2017-2018թթ. և 2018-2019թթ. մայիսից ապրիլ ընկած ժամանակահատվածներում)



Հետհեղափոխական շրջանում դրական միտումներ են արձանագրվել բիզնես կարգի ավիատոմսերի ձեռքբերման քանակային տեսանկյունից: Մասնավորապես, 2018թ. սեպտեմբերից Կառավարությունը անցում է կատարել բացառապես էկոնոմ կարգի ավիատոմսերի ձեռքբերմանը (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Բիզնես կարգի ավիատոմսերի ձեռքբերման դինամիկան, հատ (2017-2018թթ. և 2018-2019թթ. մայիսից ապրիլ ընկած ժամանակահատվածներում)



Ի տարբերություն բիզնես կարգի ավիատոմսերի, էկոնոմ կարգի ավիատոմսերի ձեռքբերումները արձանագրել են փոփոխական միտումներ (Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Էկոնոմ կարգի ավիատոմսերի ձեռքբերման դինամիկան, հատ (2017-2018թթ. և 2018-2019թթ. մայիսից ապրիլ ընկած ժամանակահատվածներում)



Համադրելով վերոնշյալ երկու ժամանակաշրջաններում ավիատոմսերի ձեռքբերումների վրա կատարված ծախսերը, հետհեղափոխական շրջանում կարելի է նկատել դրանց կրճատման ուղղությամբ դրական միտում: Գծապատկեր 7-ում այդ միտումը երևում է ավելի հստակ:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ ավիատոմսերին ուղղված ծախսերը կրում են սեզոնային բնույթ և ծախսերը հասնում են առավելագույնի հատկապես աշնան ամիսներին:

Գծապատկեր 7[6]. Ավիատոմսերի գնման դինամիկան ըստ ամիսների, մլն դրամ (2017-2018թթ. և 2018-2019թթ. մայիսից ապրիլ ընկած ժամանակահատվածներում)



Ինչպես երևում է Գծապատկեր 7-ից, թավշյա հեղափոխությունից հետո գրեթե բոլոր ամիսներին (բացառությամբ հուլիս ամսվա) կատարված գործուղումների ծախսերը էականորեն նվազել են, ի տարբերություն 2017-18թվականների նույն ժամանակահատվածի: Մասնավորապես,

[6] https://www.govtravel.am/report/

2019թ հունվարին 3 մլն դրամով, փետրվարին 41 մլն դրամով, իսկ արդեն մարտին կրճատվել է գրեթե կրկնակի անգամ՝ 64 մլն դրամով:

Այնուհետև, հաշվարկել ենք մեկ ամսվա ավիատոմսերի միջին ծախսը նախահեղափոխական և հետհեղափոխական շրջաններում: Այսպիսով, 2017-18 թվականներին միջին ամսեկան ցուցանիշը կազմել է 104 մլն դրամ, իսկ 2018-19 թվականներին՝ 83 մլն դրամ, հետևաբար նոր իշխանություններին հաջողվել է ծախսերը կրճատել 20 %ով: Այս դրական միտումը պարզաբանվում է մասնավորապես այն հանգամանքով, որ բիզնես կարգի ավիատոմսերը փոխարինվել են էկոնոմ կարգով:

Այնուամենայնիվ, հետազոտության ընթացքում նկատվել են որոշակի կասկածելի գործարքներ, որոնց գնման գինը շուկայականից շատ ավելի բարձր է: Մասնավորապես, 2018թ նոյեմբերի 23-ին Սփյուռքի նախարարության կողմից 1 ավիատոմս Երևան-Բոստոն և հետադարձ ուղղությամբ ձեռք է բերվել 1 147 761 դրամով, այն դեպքում երբ այդ ժամանակահատվածում տոմսերի գինը սկսվում է 700 000-ից: Միևնույն ամսվա ընթացքում Սփյուռքի նախարարությունը ձեռք է բերել 2 ավիատոմս, Երևան-Լոս Անջելես ուղղությամբ, որոնցից յուրաքանչյուրի արժեքը կազմել է 814 920 դրամ: Նշված ուղղությամբ ավիատոմսերի արժեքը սկսվում է 350 000 դրամից, և միայն Պրեմիում Էկոնոմ կարգի ավիատոմսերի գինը սկսվում է 750 000 դրամից:

ՀՀ Արտաքին Գործերի Նախարարության կողմից ևս կատարվել է բարձրարժեք ավիատոմսի գնում: 2018թ նոյեմբերի 22-ին գնվել է 1 ավիատոմս 985 271 դրամ արժողությամբ՝ Երևան-Լոս Անջելես և հետադարձ ուղղությամբ, ինչը կրկնակի թանկ է այդ ժամանակահատվածին բնորոշ նվազագույն գնից:

2018թ նոյեմբերի 17-ին Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը ձեռք է բերել ավիատոմս 1,6 մլն դրամ արժողությամբ, որի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու ակնկալիքով այցելեցինք https://www.e-gov.am/trips կայք, որտեղ պայմանագիրը բացակայում էր :

Գնված ավիատոմսերի մոնիտորինգ, ըստ ամիսների

Աղյուսակ 1. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2018թ, մայիս)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	17,5	17,9
Արամ Խաչատրյան-մրցույթ մշակութային հիմնադրամ	4,3	4,4
ՀՀ ԱԳՆ	4,3	4,4
ԵՊՀ հիմնադրամ	3,4	3,5
ՀՀ Հաշվեքննիչ պալատ ՊԿՀ	2	2
Հանրագումարը	**31,5**	**32,1**
Ընդամենը	**98**	**100**

Աղյուսակ 2. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2018թ, հունիս)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	27,6	28.5
ՀՀ ԱԳՆ	12,3	12.7
ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվ. ֆիզիկա-մաթեմատիկական հատուկ դպրոց	7,4	7.6
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմ	3,1	3.2
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ	2,6	2.7
Հանրագումարը	**53**	**54.8**
Ընդամենը	**96.8**	**100**

Աղյուսակ 3. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2018թ, հուլիս)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	26,8	26,9
ՀՀ ԱԳՆ	12,2	12,2
ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվ. ֆիզիկա-մաթեմատիկական հատուկ դպրոց	9,6	9,6
ՀՀ ոստիկանություն	5,4	5,4
ՀՀ սփյուռքի նախարարություն	4	4
Հանրագումարը	**58**	**58,2**
Ընդամենը	**99,6**	**100**

Աղյուսակ 4. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2018թ, օգոստոս)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	30,3	28,9
ՀՀ վարչապետի աշխատակազմ ՊԿՀ	9,7	9,3
ՀՀ ԱԳՆ	7,3	7
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	6,7	6,4
ՀՀ ԱԻՆ	6,2	5,9
Հանրագումարը	**60,2**	**57,4**
Ընդամենը	**104,8**	**100**

Աղյուսակ 5. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2018թ, սեպտեմբեր)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	19,6	18.3
ՀՀ ԱԳՆ	10	9.4
ԵՊՀ հիմնադրամ	9	8.4
ՀՀ ԿԱ ՊԵԿ	7,1	6.6
ՀՀ վարչապետի աշխատակազմ	5,3	5
Հանրագումարը	**51**	**47.7**
Ընդամենը	**106.9**	**100**

Աղյուսակ 6. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2018թ, հոկտեմբեր)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	20,1	18,3
ՀՀ ԱԳՆ	10,3	9,4
ՀՀ ԳԱԱ ՊՈԱԿ	9	8,2
Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա ՀԿ	6,2	5,6
ՀՀ ԿԱ ՊԵԿ	4,9	4,5
Հանրագումարը	**50,5**	**45,9**
Ընդամենը	**110**	**100**

Աղյուսակ 7. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2018թ, նոյեմբեր)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	24,3	21
ՀՀ սփյուռքի նախարարություն	22,2	19,2
ՀՀ ԱԳՆ	14,4	12,5
ՀՀ վարչապետի աշխատակազմ	3,3	2,9
Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ	3,3	2,9
Հանրագումարը	**67,5**	**58,4**
Ընդամենը	**115,5**	**100**

Աղյուսակ 8. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2018թ, դեկտեմբեր)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
Կադրերի և ռազմական կրթության վարչություն	11,3	21,3
ՀՀ ՊՆ	7,2	13,6
ՀՀ ԱԳՆ	6,5	12,2
ԵՊՀ-ին առընթեր Ա.Ծահինյանի անվ. ֆիզիկա-մաթեմատիկական հատուկ դպրոց	4,6	8,7
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	2,6	4,9
Հանրագումարը	**32,2**	**60,6**
Ընդամենը	**53,1**	**100**

Աղյուսակ 9. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2019թ, հունվար)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ԱԳՆ	6,3	15,5
ՀՀ Ոստիկանություն	5,2	12,8
ՀՀ ՊՆ	4,8	11,8
ՀՀ վարչապետի աշխատակազմ	2,8	6,9
ՀՀ նախագահի աշխատակազմ	2,3	5,7
Հանրագումարը	**21,4**	**52,6**
Ընդամենը	**40,7**	**100**

Աղյուսակ 10. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2019թ, փետրվար)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	6	16
ՀՀ նախագահի աշխատակազմ	2,9	7,7
Հայաստանի շախմատի ֆեդերացիա	2,6	6,9
Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ	2,4	6,4
ԵՊՀ հիմնադրամ	2,4	6,4
Հանրագումարը	**16,3**	**43,4**
Ընդամենը	**37,6**	**100**

Աղյուսակ 11. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2019թ, մարտ)

Պետական կառույցի անվանում	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)
ՀՀ ՊՆ	14,2	16,2
ՀՀ ԱԳՆ	11,7	13,4
Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ	4,7	5,4
ՀՀ ոստիկանություն	4,4	5
ԵՊՀ հիմնադրամ	4,2	4,8
Հանրագումարը	**39,2**	**44,9**
Ընդամենը	**87,4**	**100**

Աղյուսակ 12. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (2017թ ապրիլից 2018թ մարտի 31-ը և 2018թ ապրիլից - 2019թ մարտի 31)

Պետական կառույցի անվանումը	Ֆինանսավորման արժեքը (մլն դրամ)		Տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)	
	2017-2018թթ	2018-2019թթ	2017-2018թթ	2018-2019թթ
ՀՀ ՊՆ	294,5	206,3	23.6	20,8
ՀՀ ԱԳՆ	79,8	102,5	6.4	10,3
ԵՊՀ հիմնադրամ	46	36,2	3.7	3,6
ՀՀ ոստիկանություն	41,9	33,5	3.4	3,4
ՀՀ ԿԱ ՊԵԿ	41,3	33,3	3.3	3,4
ՀՀ վարչապետի աշխատակազմ	-	33	-	3,3
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	29,1	28,9	2.3	2,9
ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց ՊՈԱԿ	-	27,7	-	2,8
ՀՀ Սփյուռքի նախարարություն	3	27,7	0.2	2,8
Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ	55,2	19,9	4.4	2
Հանրագումարը	**590.8**	**549**	**47.4**	**55,3**
Ընդամենը	**1245,6**	**992,5**	**100**	**100**

2018թ ապրիլի 1-ից մինչև 2019թ մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում կատարվել է 992,5 մլն դրամի ավիատոմսերի ձեռքբերում, որտեղ զգալի մասնաբաժին ունեն վերը նշված տասնյակը ամփոփող կառույցները: Դրանց միասնական կշիռը ողջ կառուցվածքում կազմել է 55,3 % կամ 549 մլն դրամ: Դիտարկելով նախահեղափոխական և հետհեղափոխական շրջանների միևնույն ժամանակահատվածը, տեսնում ենք, որ 2018-19 թվականներին 253,1 մլն դրամով կամ

20 %ով նվազել են ավիատոմսերին ուղղված ծախսերը: Մասնավորապես, ՊՆ ծախսերը նվազել են 88,2 մլն դրամով, Հայաստանի ազգային Ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ-ի ծախսերը՝ 35,3 մլն դրամով և ԵՊՀ հիմնադրամի ծախսերը՝ 9,8 մլն դրամով, այնուհանդերձ հետհեղափոխական շրջանում առկա են պետական կառույցներ, որոնք հաճախ չեն գործուղվել նախկինում, սակայն այժմ ունեն ավիատոմսերի ծախսերի կառուցվածքում զգալի կշիռ, ինչպես օրինակ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմը (3,3% ընդհանուր ավիատոմսերի գնումներում) և ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց ՊՈԱԿ-ը (2,8%) :

Եզրակացություն

Ամփոփելով հետհեղափոխական մեկ տարին, հետազոտությունները վկայում են, որ պետական գործուղումների ոլորտում տեղի են ունեցել բարեփոխումներ: Միջինում, 20 %ով նվազեցվել են ավիատոմսերի ձեռք բերման ծախսերը, հիմնականում բիզնես կարգի ավիատոմսերից էկոնոմ կարգի ավիատոմսերի ձեռքբերմանն անցնելու շնորհիվ: Մասնավորապես, 2018թ. մայիսից մինչև նույն թվականի սեպտեմբեր ամիսը, բիզնես կարգի ավիատոմսերի ձեռքբերումն ունեցել է նվազման միտում, իսկ սեպտեմբերից ի վեր առհասարակ դրանք փոխարինվել են էկոնոմ կարգի ավիատոմսերով: Գրանցելով դրական փոփոխություն, այնուամենայնիվ, հայտնաբերվել են ավիատոմսերի գնման պայմանագրեր շուկայական արժեքից բավականին բարձր գներով:

Հարկ է նշել, որ 2018 թ. հունվարից ի վեր https://www.govtravel.am/report/ կայքում տեղակայված ավիատոմսերին վերաբերող ինֆորմացիան նախկինում կիրառվող excel ֆորմատի փոխարեն սկսել է տեղադրվել pdf ֆորմատով, ինչը բարդացնում է օգտատերերի և հետազոտողների վերլուծական աշխատանքը: